ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ

10 փետրվարի 2026 թվական

6-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 1-ԻՆ ՆԻՍՏ

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԲԱՆԱՎՈՐ ՀԱՐՑԵՐԻ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԻ ՍՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ժամը 14.50

Տիգրան Ավինյան

-Ավագանու հարգելի՛ անդամներ, հարց ու պատասխանի համար գրանցվել է ավագանու 11 անդամ՝

Վահան Ավագյան՝ «Հանրային ձայն» խմբակցություն,
Հայկ Գրիգորյան՝ «Ազգային առաջընթաց» խմբակցություն,
Ռոբերտ Ծովյան՝ «Ազգային առաջընթաց» խմբակցություն,
Գրիգոր Իսկանդարյան՝ «Մայր Հայաստան» խմբակցություն,
Գևորգ Ստեփանյան՝ «Մայր Հայաստան» խմբակցություն,
Աննա Ավետիսյան՝ «Մայր Հայաստան» խմբակցություն,
Մանուկ Սուքիասյան՝ «Մայր Հայաստան» խմբակցություն,
Իոսիֆ Կուբատյան՝ «Ազգային առաջընթաց» խմբակցություն,
Արմեն Քոչարյան՝ «Մայր Հայաստան» խմբակցություն,
Արամ Թորոսյան՝ «Ազգային առաջընթաց» խմբակցություն,
Սուսաննա Մելիքյան՝ «Մայր Հայաստան» խմբակցություն:

Տիգրան Ավինյան

-Առաջին հարցը՝ «Հանրային ձայն» խմբակցության ղեկավար Վահան Ավագյան, խնդրեմ:

Վահան Ավագյան

- Առաջին հարցս վերաբերում է երևանցիներին, քաղաքացիներին հուզող թեմայի: Դեռևս 2025թ. դեկտեմբերի վերջին նկատել եմ օրենսդրական փոփոխություն՝ Հողային օրենսգրքի 67-րդ, 68-րդ հոդվածներում փոխվել է աճուրդների իրականացման կարգը: Հետաքրքիր է՝ դրա մասին Դուք իմացե՞լ եք, թե՞ ոչ և ի՞նչ քայլեր եք ձեռնարկել:

Ցանկանում եմ հասկանալ 2026թ. բյուջեն հաշվարկելիս, հաշվարկել եք արդյոք՝ աճուրդային կարգի փոփոխության դեպքում կարողանալու՞ եք բյուջեն ավելացնել:

Երկրորդ հարցը հետևյալն է. եթե չստացվի բյուջեն լրացնել, ինչպե՞ս եք տեսնում աղի հետևանքով վնասված ասֆալտի վերականգնումը: Մի քանի տարվա ընթացքում որոշակի լավ վիճակի էր հասել, բայց այս ձմեռ հասկացանք, որ ամբողջ քաղաքում ահավոր լուրջ փոսեր կան: Ինչպե՞ս եք տեսնում դրա լուծումը:

Տիգրան Ավինյան

- Պարոն Ավագյան, մենք տեղեկացված ենք Հողային օրենսգրքի փոփոխությունների մասին: Երևանի քաղաքապետարանի տեսանկյունից այդ փոփոխությունը շատ մեծ ազդեցություն չի ունենա, որովհետև հիմնականում Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպվող աճուրդները սկսվում են շուկայականին մոտարկված գներով:

Շատ դեպքերում քաղաքապետարանում աճուրդները չեն կայանում, որոշակի ընթացակարգով գների նվազեցմամբ դրվում են աճուրդի հաջորդ անգամ: Երևան քաղաքում այս առումով խնդիր չեմ տեսնում:

Մյուս համայնքներում միգուցե որոշակի խնդիր առաջանա, որովհետև աճուրդային տրամաբանությունն, այնուամենայնիվ, ենթադրում է որոշակի սակարկված մեկնարկային գին, որպեսզի մասնակիցների թիվն ավել լինի: Եթե սա չլիներ աճուրդային տրամաբանությամբ, այլ լիներ օրինակ՝ վաճառք, ապա, այո', տրամաբանական է, որ պետք է լիներ շուկայական արժեքով: Նորից եմ կրկնում, որ Երևան քաղաքում մեծ խնդիր չեմ տեսնում, սակայն Ձեր մտահոգությունը մենք կփոխանցենք ՀՀ կառավարության գործընկերներին:

Ինչ վերաբերում է ասֆալտին, ապա նշեմ, որ ասֆալտի հետ կապված խնդիրները հիմնականում առաջացել են այն հատվածներում, որտեղ անցկացվել է կոյուղի, ջրագիծ, այսինքն՝ արդեն իսկ ասֆալտի միջամտություն է տեղի ունեցել, նաև այն հատվածներում, որտեղ ասֆալտի հիմնանորոգման կամ միջին նորոգման աշխատանքներ տևական ժամանակ չի իրականացվել: Նախորդ տարի այսքան վատ չի եղել ասֆալտի, ճանապարհների վիճակը ձմեռվանից հետո: 2025թ. դեկտեմբերից մինչև 2026թ. հունվարը ներառյալ, ռեկորդային ծավալով աղ է օգտագործվել, որն արդյունավետ, բայց հետևանքներ թողնող միջոց է:

Ֆինանսների մասով Ձեր հարցին կպատասխանի Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Անդրանիկ Թևոսյանը:

Անդրանիկ Թևոսյան

- Այս տարի նախատեսված է 200 հազ. քմ փոսային նորոգում, ինչպես անցյալ տարի, նաև 1.7 մլրդ դրամի միջին նորոգման ծրագրեր: Նախատեսված են նաև հիմնանորոգման և ճաքալցման աշխատանքներ:

Տիգրան Ավինյան

- Կարիք առաջանալու դեպքում մենք վստահորեն կարող ենք ավելացնել այդ գումարները: Տեղեկացնեմ նաև, որ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը նույնպես մեզ աջակցելու է փողոցների փոսալցման, միջին նորոգման հարցերում և որոշ ծրագրեր համատեղ իրականացնելու ենք Երևան քաղաքում:

Հաջորդ հարցը՝ «Ազգային Առաջընթաց» խմբակցության անդամ Հայկ Գրիգորյան, խնդրեմ:

Հայկ Գրիգորյան

- Առաջին հարցը վերաբերում է Ամիրյան-Բուզանդի-Արամի փողոցների մասնավոր կայանատեղիների համար անհատների կամ կազմակերպված մարդկանց կողմից շենքերի բնակիչներից գումար վերցնելու մասին ահազանգին: Կայանատեղիի հարցերը չեն լուծվում կարծում եմ, որովհետև նույնիսկ կարմիր գծերի վրա կանգնելու համար է գումար հավաքվում: Պատճառն ամենայն հավանականությամբ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 162-րդ հոդվածի փոքր սանկցիան է, որը 10000 ՀՀ դրամ է:

Ես ոստիկանությունից պարզել եմ, որ իրենք անցյալ տարվա ընթացքում Երևանի քաղաքապետարան են ուղարկել մոտ 100 արձանագրություն, բայց քաղաքապետարանը բոլորի մասով արձանագրություններ չի կազմել: Կցանկանայի իմանալ, թե ի՞նչն է պատճառը, որ իրավապահ մարմինների կողմից ուղարկված նյութերի ամբողջ ծավալով չի կատարվում պատժիչ գործառույթը, և արդյոք քաղաքապետարանը մտադրություն ունի 162-րդ հոդվածի սանկցիան ավելացնելու համար որևէ նախագիծ ներկայացնի, քանի որ 10000 դրամ տուգանքի պարագայում այդ հարցը երբեք չի լուծվելու:

Երկրորդ հարցը՝ Բուզանդի փողոցում նկատել եմ, որ կատարվում է մայթի լայնացման աշխատանք: Իմանալով, որ այդտեղ մայթը 6-7 մետրից լայն է, ինձ համար անհասկանալի է, որ քաղաքային բյուջեն ծախսվում է մեծ մայթն ավելացնելու նպատակով, սակայն այդ մայթը զավթված է սրճարանների և ռեստորանների կողմից: Միթե՞ ավելի խելամիտ չէր լինի մայթն ազատել տվյալ կրպակներից, շենքի դիմաց ժամանակավոր փակված տարածքներից, որոնք փակված են ձմռան ընթացքում, և այդքան ծախս չանել բյուջեից մայթը լայնացնելու համար: Հասկանում եմ նաև, որ նպատակն այն է, որ փողոցը վերածվի

1 ավտոմեքենայի երթևեկության համար և չկայանեն, բայց այլ լուծումներ կան, ինչ-որ ժամանակ հետո կարող է փոխվել և ցանկանաք, որ մայթը լինի երկու գիծ: Կարծում եմ սխալ է այդպիսի հարցերը լուծել բյուջեի հաշվին:

Տիգրան Ավինյան

- Նախ ես անդրադառնամ Արամի փողոցի մայթին: Ցանկանում եմ տեղեկացնել Ձեզ, որ մայթի լայնացման աշխատանքների ֆինանսավորումն իրականացվում է տեղի տնտեսվարողների կողմից, այսինքն ֆինանսական բեռն ամբողջությամբ դրված է իրենց վրա: Իրականում՝ հաշվի առնելով, որ այդ հատվածում արդեն որոշակի միջավայր է ձևավորված եղել, մենք որոշել ենք չգնալ այն ճանապարհով, որ քանդենք, մաքրենք, բերենք նորմերի ըստ եղած իրավիճակի, այլ որոշել ենք տնտեսվարողներին տալ հնարավորություն մայթը լայնացնել, նորմատիվային առումով խնդիրը լուծել՝ այսինքն ունենալ նաև դրսում իրենց սեղանները և աթոռները, որոնք կլինեն մեր նորմատիվների սահմաններում և որևէ խնդիր չի առաջացնի այդ հատվածով տեղաշարժի համար: Այո՛, դա կլինի ի հաշիվ ավտոմեքենաների որոշ կայանատեղիների, բայց սա մեզ մոտ ընդհանուր սկզբունք է:

Եթե նկատել եք Երևան քաղաքի շատ հատվածներում ավտոմեքենաների կայանատեղիների հաշվին, կամ ավտոմեքենայի համար նախատեսված ճանապարհի հաշվին մենք տեսնում ենք լայնացվող մայթեր, մասնավորապես՝ Փոքր կենտրոնում, որտեղ քայլելու համար նման ենթակառուցվածքի կարիք շատ ունենք:

Ինչ վերաբերում է հասարակական կարգի պահպանության ծառայության կողմից իրականացվող գործառույթներին՝ ուզում եմ տեղեկացնել, որ այդ աշխատանքները նախաձեռնում ենք մենք, խնդրում ենք ՀՀ ՆԳՆ ոստիկանության մեր գործընկերներին աջակցել մեզ այդ գործընթացում, և ընդհանուր առմամբ առաջնային հայտնաբերվում է մեր կողմից:

Խնդրում եմ քաղաքապետարանի աշխատակազմի հասարակական կարգի պահպանության ծառայությանը ներկայացնել թե ի՞նչ աշխատանք է արվում ապօրինի կայանման արգելքները և խոչընդոտները վերացնելու համար, և թե ի՞նչ խնդիրներ ենք արձանագրում, որոնք բարդ են լուծման տեսանկյունից:

Վաղթանգ Բարսեղյան

- Ներկայացնեմ, որ Վարչական իրավախախտումների մասին օրենսգրքի 162-րդ հոդվածը, որը նշվեց դիսպոզիցիան սահմանում է ոչ թե նվազագույն աշխատավարձի տասնապատիկի՝ 10000-ի, այլ յոթանասունից հարյուրապատիկի չափով տուգանք է սահմանված: Իսկ վարչական պատասխանատվության ենթարկվելուց և շարունակելու դեպքում կազմվում է երկու հարյուրապատիկի չափով: Այնտեղ տարանջատվում է սիգ ձկան տեսակի տուգանքի չափը:

Ինչ վերաբերում է նշված տրանսպորտային միջոցների վարձույթի, վաճառքի նպատակով կայանմանը՝ 162.3-րդ հոդածով և տուգանքի չափը սահմանված է նվազագույն աշխատավարձի տասնապատիկի չափով, իսկ կրկին տուգանվելուց հետո շարունակելու դեպքում՝ երեսունապատիկի չափով:

Ոստիկանության կողմից ստանում ենք բազմաթիվ տեղեկատվություն կատարված իրավախախտման փաստերի վերաբերյալ և բավականին շատ դեպքերում կազմվում են համապատասխան արձանագրություններ: Առանձին արձանագրություններ չի կազմվում, հաշվի առնելով, որ հնարավոր չի լինում հայտնաբերել սուբյեկտներին, կամ իրազեկելու գրավոր ծանուցագրով: Այս դեպքում Վարչական իրավախախտումների մասին օրենսգրքի 255-րդ հոդվածը սահմանափակում է մեր իրավունքները և հնարավոր չի լինում կազմել համապատասխան արձանագրություն:

Տիգրան Ավինյան

- Պարոն Գրիգորյան, եթե չեմ սխալվում «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի նոր նախագծում ունենք լուծումներ:

Ծանուցումների ստացման հետ կապված օրենսդրական փոփոխությունների մասին պարզաբանումներ կներկայացնի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Արմինե Ստեփանյանը:

Արմինե Ստեփանյան

- Նախատեսել ենք, որ ծանուցումները պետք է ստանան էլեկտրոնային՝ azdarar.am հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքի, yerevan.am պաշտոնական կայքի և էլեկտրոնային փոստի միջոցով, որը համարվում է պատշաճ ծանուցում:

Տիգրան Ավինյան

- Այդտեղ էլ ունենք որոշակի նոր գործիքակազմ, որն ամենայն հավանականությամբ այս տարի կմտնի ուժի մեջ:

Հայկ Գրիգորյան

- Ամեն դեպքում, ես լսեցի որ 10000, կրկնակի դեպքում 30000 տուգանք գոյություն ունի ավտոմեքենաների վաճառքի և վարձույթի համար, բայց այդ օրենքի փոփոխությունն այդ հարցը չի լուծի: Խնդիրը շարունակվում է պահպանվել, տուգանքներ միգուցե կիրառվեն, և նշանակում է, որ ձեռնտու է տուգանքների պայմաններում այդ գործողությունը կատարելը: Սա պետք է վերանայվի, որպեսզի օրենքի փոփոխություններից հետո իմանանք, որ այս հարցը լուծվել է և այլևս չանդրադառնանք այս հարցին: Կարմիր գծերի հաշվին գումարներ են հավաքում, կամ որևէ առարկաներ են դնում այդ հատվածներում, որ ոչ ոք չկայանի և շարունակում են հավաքել: Սա նշանակում է, որ միջոցները 100%-ով արդյունավետ չեն:

Տիգրան Ավինյան

- Այս ծանուցման մեխանիզմով միգուցե դեռ ունենք այդ խնդիրը, բայց եթե քաղաքացուն էլեկտրոնային ծանուցելու դեպքում համարում ենք արդեն ծանուցված, և երբ որոշակի պարբերականությամբ նա 70000-200000 դրամով մի քանի անգամ տուգանվում է, հետագա մոտավոր տարբերակը, որ ես տեսնում եմ, այդ երևույթը քրեականացնելն է: Միգուցե դա էլ ունի իր քննարկելու տեղը, մենք պատրաստակամ ենք քննարկել:

Հաջորդ հարցը՝ «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ Ռոբերտ Ծովյան, խնդրեմ:

Ռոբերտ Ծովյան

- 2025թ. դեկտեմբերի վերջին կայացած աճուրդների ընթացքում 35 հող վաճառվել է, որից՝ 25-ի դեպքում աճուրդին մասնակցել է մեկ հոգի: Այսինքն՝ մեկնարկային արժեքով գնել է այդ հողատարածքը: Թույլ տվեք Ձեր հետ չհամաձայնվել, որ Երևանի քաղաքապետարանի մեկնարկային գինը լինում է շուկայական արժեքին համապատասխան, քանի որ Դավթաշեն վարչական շրջանում 32 մլն դրամով հող է վաճառվել, հաջորդ օրը 75 մլն դրամ արժեքով հայտարարություն է տեղադրվել www.list.am կայքում և վաճառվել է 70 մլն դրամով:

Այո՛, կան հողեր, որոնք դրվում են աճուրդի շուկայական արժեքին մոտ գնով, բայց իմ կարծիքով, խնդիրը կայանում է նրանում, որ պատշաճ չի լուսաբանվում: Ես, որպես Երևան քաղաքի ավագանի, դժվարությամբ եմ իմանում աճուրդի օրերի մասին: Պետք է նոր գործիքակազմ մշակել, որ մարդիկ նախօրոք և ավելի լավ կազմակերպված ձևով տեղեկանան աճուրդների իրականացման մասին:

Երկրորդ հարցը վերաբերում է «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքում կատարվող փոփոխություններին: Ես, գործընկերներս, նաև լրագրողները երբ հարցեր էինք ուղղում Ձեզ, Դուք ասում էիք, որ այդ հարցերն ընդգրկված են լինելու «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի նոր փոփոխություններում, բայց դեռ չկա: Ե՞րբ է ընդունվելու օրենքի փոփոխությունը:

Տիգրան Ավինյան

- Ձեր մատնանշած աճուրդների կազմակերպման նոր մեխանիզմն արդեն գործում է այս տարվանից: Դա էլեկտրոնային մեխանիզմն է, բայց ամեն դեպքում սա դեռ չի երաշխավորում Ձեր նշած հանրամատչելիությունը:

Եթե կան առաջարկներ, ապա ներկայացրեք: Այս մասով խնդրում եմ առաջարկներ ներկայացվի նաև Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետ Նարեկ Բարսեղյանի կողմից:

Աճուրդի ներկայացված ցանկը եղել է 60-ից ավել, սակայն աճուրդը կայացել է 35 հողի մասով, մյուսների մասով մասնակից չի եղել, որը նշանակում է, որ նախնական գները բարձր են եղել դրված, դրա համար մասնակից չի եղել: Այժմ այս նոր մեխանիզմով կփորձենք և կհասկանանք ինչ է ստացվում, բայց այն, որ ավելի հանրամատչելի ու

տեղեկացված դարձնենք մարդկանց, որ ավելի մեծ մրցակցություն լինի, շատ լավ առաջարկ է և պետք է աշխատենք այդ ուղղությամբ:

Երկրորդ հարցի վերաբերյալ տեղեկացնեմ. «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքում փոփոխությունները շատ ծավալուն էին, որը նաև հարակից 33 օրենքում փոփոխություններ էր ենթադրում: Նախորդ տարի և այս տարի 4 անգամ քննարկում է եղել այդ հարցի վերաբերյալ՝ ՀՀ Վարչապետի և փոխվարչապետի գլխավորությամբ: Բոլոր հարցերը քննարկվել են, ամենայն հավանականությամբ այս շաբաթ կամ հաջորդ շաբաթվա սկզբին կուղարկենք ՀՀ Ազգային ժողով:

Հաջորդ հարցը՝ «Մայր Հայաստան» խմբակցության անդամ Գրիգոր Իսկանդարյան, խնդրեմ:

Գրիգոր Իսկանդարյան

-Պարոն Ավինյան, Դուք հայտարարեցիք, որ փոսերն առաջացել են ռեկորդային, մեծ քանակի աղի օգտագործման հետևանքով, դա Ձեր անձնական կարծի՞քն էր, թե մասնագիտական կարծիք է:

Տիգրան Ավինյան

-Պարոն Իսկանդարյան, դա մասնագիտական կարծիք է և դա բացարձակ ճշմարտություն է:

Գրիգոր Իսկանդարյան

-Երկրորդ հարցս հնչեցնեմ. երբ նայում ենք փողոցներում առաջացած փոսերին, երևում է, որ այդ փոսերի հիմքը հոսել է: Հիմնականում խորը փոսեր առաջանում են դիտահորերի շրջակայքում, մալուխներ փոխելու տարածքներում, մնացած փոքր փոսերն առաջանում են ոչ թե աղից, այլ չնորոգելուց:

2024թ. Լեռ Կամսարի փողոցում երեք անգամ ասֆալտապատման աշխատանքներ է իրականացվել: 2025թ. կրկին երեք անգամ ասֆալտապատման աշխատանքներ են իրականացվել, այժմ կարող եք անցնել և տեսնել վիճակը: Փոսային նորոգման աշխատանքներ իրականացնելով այդ փողոցը կարգավորել հնարավոր չէ:

Ես ահազանգում էի, հայտարարում էի, փորձում էի բացատրել, որ ասֆալտապատում եք իրականացնում, իսկ կողքի ճաքերը թողնում եք, երբ անձրև է գալիս, լցվում է արանքները և առաջանում են փոսեր: Վերանորոգում եք մի փոքր փոս՝ կողքի ճաքը թողնելով, արդյունքում քանդվում է և՛ ճաքը, և՛ նոր արված ասֆալտը: Եթե աղի պատճառով է, ապա ինձ մոտ հարց է առաջանում՝ քաղաքապետարանի դիմաց աղ չե՞ք ցանել, թե ձյուն չի եկել:

Ես պնդում եմ, որ փոսերի հիմնական մասը ոչ թե աղից է, այլ վատ վերանորոգված դիտահորերից է, խրամուղիներից և չվերանորոգված փողոցներից:

Տիգրան Ավինյան

-Պարոն Իսկանդարյան, գրեթե Ձեր բոլոր պնդումների հետ համաձայն եմ, այսինքն միանշանակ այն հատվածներում, որտեղ առկա են՝ դիտահորի նստվածք, անցկացված

մալուխներ, կոյուղիներ, ջրագծեր, էլեկտրական գծեր և հատկապես եթե այդ հատվածներում աշխատանքներ իրականացվել են մինչև 2024թ., նաև հաշվի առնելով այս տարվա տեղումները, այո՛, Դուք ճիշտ եք՝ եթե ջուրն անցնում է ասֆալտի տակ, վստահաբար այդ խնդիրն առաջանում է:

Երևան քաղաքի փողոցային ցանցն ահռելի մեծ է, ընդհանուր առմամբ, և մենք փուլ առ փուլ՝ միջին նորոգումներով, որոշակի ստանդարտի ենք բերում: Այս տարի իրականացնելու ենք նաև հիմնանորոգման աշխատանքներ Արին-Բերդի փողոցում, որի մասին բազմաթիվ անգամ խոսել ենք և վերջապես այս տարի հասցնում ենք իրականացնել դա:

Համապատասխան ֆինանսական միջոցներ ենք տրամադրել քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչությանը և ես վստահ եմ, որ շատ սեղմ ժամկետներում աշխատանքները պետք է իրականացվեն, իհարկե, եթե եղանակային պայմանները թույլ տան:

Պարզաբանումներ կներկայացնի նաև Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Անդրանիկ Թևոսյանը:

Անդրանիկ Թևոսյան

-Պարոն քաղաքապետ, կուզեի արձանագրել, որ անցյալ տարի նշված ճաքային հատվածներում մեծ կտորով ասֆալտապատման աշխատանքներ են իրականացվել՝ Կոմիտասի պողոտայում, Թբիլիսյան խճուղում: Այդ բոլորը կանխարգելիչ աշխատանքներ են եղել՝ նշված խնդիրները վերացնելու համար և այս տարի կրկին իրականացվելու է 200 հազ. քմ փոսալցման աշխատանքներ, նաև միջին նորոգման, ճաքալցման և հիմնանորոգման աշխատանքներ:

Տիգրան Ավինյան

-Լեռ Կամսարի փողոցի վերաբերյալ պարզաբանումներ կներկայացնի Կենտրոն վարչական շրջանի ղեկավար Պետրոս Պետոյանը:

Պետրոս Պետոյան

-Լեռ Կամսարի փողոցում աշխատանքները մեկ անգամ իրականացվել է Կենտրոն վարչական շրջանի երկրորդային փողոցների փոսալցման աշխատանքների ծրագրով: Կարծում եմ Ձեր պնդումն արդարացի չէ, քանի որ այնտեղ շատ մեծ ծավալով աշխատանք է իրականացվել: Ձեր կողմից նշված հատվածում երկու շենքի կոյուղատարերի և հեղեղատարերի ջրագծերը միացված են մեկ ընդհանուր կոյուղու դիտահորում, այդ պատճառով անընդհատ դուրս է թափվում: Մենք պատվիրել ենք նաև փորձաքննության ծառայություն և հաստատվեց, որ դա ոչ թե ասֆալտի որակից ու կատարված աշխատանքից է, այլ հեղեղատարից ու դիտահորից է: Տարեվերջի դրությամբ փողոցի մնացած հատվածներում այդպիսի խնդիրներ չկային:

Տիգրան Ավինյան

-Այս հարցի վերաբերյալ քաղաքապետարանի աշխատակազմի կոմունալ տնտեսության վարչության պետ պարոն Կարոյան, խնդրում եմ ուսումնասիրեք և անհրաժեշտության դեպքում նախագիծ պատրաստեք:

Հաջորդ հարցը «Մայր Հայաստան» խմբակցության անդամ Գևորգ Ստեփանյան, խնդրեմ:

Գևորգ Ստեփանյան

-Ցանկանում եմ նշել քաղաքացիների կողմից հնչեցվող հարցը, որ Երևանի տարբեր վարչական շրջաններում իրենց սեփական մեքենաները կրում են բացասական հետևանքներ (500.000- 1.000000 մլն. դրամի չափով): Այս մասին ինձ գրել են մի քանի քաղաքացիներ, քաղաքապետարանի կողմից փոսալցման և ասֆալտապատման աշխատանքների ապաշնորհ կառավարման արդյունքում: Քաղաքացիներին չի հետաքրքրում, թե ինչ որակի ասֆալտապատում եք իրականացնում, որ անձրևի կամ ձյան մեկանգամյա տեղումից հետո վնասվում է:

Քաղաքացիների հարցը հետևյալն է՝ ապահովագրական ընկերությունները ոչ մի կերպ այս խնդրին լուծում չեն տալիս, որովհետև իրավասություն չունեն, իսկ Երևանի քաղաքապետարանն այս մասով զանգերին կամ պատասխանում է՝ կզանգահարենք, կամ ոչ մի դրական պատասխան չի տալիս:

Երկրորդ հարցը վերաբերում է տոմետներին: Երևանի քաղաքապետարանի կողմից անցյալ տարի տարբեր վարչական շրջաններում գեղեցիկ, գունավոր տոմենտներ է տեղադրվել, սակայն չանցած մեկ տարի այդ տոմենտներն ուղղակի կոտրվել են: Ասֆալտապատման և տոմենտների համար ծախսված գումարների մասով ո՞վ է մեղավոր: Քաղաքացիները ցանկանում են իմանալ միակ մեղավորն ո՞վ է:

Նաև ցանկանում եմ իմանալ Երևան քաղաքում «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության նախընտրական շտաբի պետը Դու՞ք եք լինելու:

Տիգրան Ավինյան

-Իրականում Երևան քաղաքին և երևանցիներին վերաբերող հարցերից շեղվելով, Ձեր ուշադրությունը մեր ներկուսակցական հարցերին սևեռելը շատ հետաքրքիր է: Ողջունելի է, հուսով եմ դա առողջ ուշադրություն և հետաքրքրություն է:

Ինչ վերաբերում է ճանապարհների հարցին՝ արդեն անդրադարձել եմ այս մասին: Պարոն Ստեփանյան, մեկ բան վստահորեն կարող եմ ասել, որ Դուք ունեցաք քաղաքական ելույթ, սա հարց ու պատասխան չէր:

Ով պարտավոր է այդ ֆինանսական «բեռը կրել», նա էլ «կրելու է»:

Հաջորդ հարցը՝ «Մայր Հայաստան» խմբակցության անդամ Աննա Ավետիսյան, խնդրեմ:

Աննա Ավետիսյան

- Պարոն Ավինյան, վերջերս ՀՀ կառավարության և Երևանի քաղաքապետարանի պարգևատրումներն առաջացրել են քաղաքացիների արդար դժգոհությունները:

Կարող ենք փաստել, որ երկիրը չունի ֆինանսական խնդիր, ինչը նաև փաստել է ՀՀ Նախագահ Վահանգն Խաչատուրյանը:

Այդ դեպքում հարցս հետևյալն է՝ ինչու՞ չեն լուծվում Վարդաշենի բնակիչների հարցերը:

Այդ մարդկանց կողմից տրված հարկերից է պարգևատրում կատարվել և այսօր այդ մարդիկ կանգնած են կյանքի ու մահվան արանքում: Վերջերս դարձյալ փլուզում է տեղի ունեցել և բարեբախտաբար այս անգամ ևս տուժողներ չեն եղել:

Երկրորդ հարցը՝ Վարդաշենի 9-րդ փողոցի հ.70 հանրակացարանի բնակիչները, ովքեր ևս սպասում են նոր բնակարաններ ստանալուն, իրենց միջոցներով փոս են փորել և այդտեղ աղբ են թափում: Այդ հասցեում ոչ մի կերպ աղբահանության հարցը չի լուծվում, այդտեղ աղբարկղեր չեն տեղադրվում:

Տիգրան Ավինյան

- Պարոն Կատվալյան, խնդրում եմ ուսումնասիրել աղբարկղերի տեղադրման հարցը:

Ինչ վերաբերում է Վարդաշենի բնակիչների բնակարանների հարցին, տեղեկացնեմ, որ 2023 թվականի հանդիպման ժամանակ մենք խոստացել ենք վարդաշենցիներին՝ այն մարդկանց, ովքեր բացի այդ բնակարանից այլ բնակարան չունեն, նշեմ, որ խոսքը չի վերաբերվում այն մարդկանց, ովքեր այդ վթարային շենքերում վերջերս բնակարան են գնել: Այս տարի ՀՀ կառավարության հետ պայմանավորվածության շրջանակներում առաջնային կլուծվի այն մարդկանց հարցը, ովքեր փաստացի, բացի Վարդաշենում գտնվող այդ բնակարանից, այլ բնակարան չունեն և կհասկանանք հետագա փուլերով փոխհատուցման չափը, որը հնարավորություն կտա նվազագույն պայմաններով բնակարանի գնում իրականացնելու համար:

Խնդրում եմ քաղաքապետի տեղակալ Լևոն Հովհաննիսյանին ներկայացնել տեղեկատվություն ՀՀ կառավարության հետ պայմանավորվածության մասին:

Լևոն Հովհաննիսյան

-Պայմանավորվածությունը հետևյալն է.

ՀՀ կառավարությունը ևս ցանկանում է օգնել բնակիչներին վերաբնակեցնելու հարցում և գումար տրամադրել: Հիմնական գումարը տրամադրվելու է ՀՀ կառավարության կողմից: Մեր գործընկերները խնդրել են պատրաստել ՀՀ կառավարության որոշման նախագիծ և ներկայացնել ճիշտ բաշխումը, այսինքն՝ ինչպես ենք պատկերացնում առաջնային, երկրորդային և երրորդային շահառուների ցանկերը: Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Վահան Խաչատրյանի կողմից նախապատրաստվել է ՀՀ կառավարության որոշման նախագիծը, ինձ մոտ տեղի է ունեցել քննարկում: Կարծում եմ հաջորդ շաբաթ որոշման նախագիծը կուղարկենք ՀՀ կառավարություն:

Տիգրան Ավինյան

-Պարոն Բալայան, Դուք ևս հետևեք գործընթացին:

Հաջորդ հարցը՝ «Մայր Հայաստան» խմբակցության ղեկավար Մանուկ Սուքիասյան, խնդրեմ:

Մանուկ Սուքիասյան

- Պարոն Ավինյան, վերջապես, 2025թ. հոկտեմբերին հանձնարարեցիք աջակցել հենաշարժողական խնդիրներ ունեցող երեխաների դպրոցին ավտոբուսներ տրամադրելու հարցում, այնուհետև դեկտեմբեր ամսին պարզ դարձավ, որ պետք է հետադարձ աճուրդ տեղի ունենա: Այժմ փետրվար ամիսն է, և շուտով մոտենում ենք 6 ամսյա սահմանագծին և չեմ կարծում, որ մերօրյա տեխնոլոգիական զարգացած դարաշրջանում, ավտոբուսի ձեռք բերումը կարող է ձգվել 6 ամիս: Այս թեմայի հետ կապված ակնկալում եմ որևէ հստակ տեղեկություն:

Հաջորդ հարցը կապված է դերասան Վահագն Սիմոնյանի հետ: 2025թ. դեկտեմբեր ամսին ես հարց բարձրացրի նրա անտուն մնալու մասին: Չնայած նրա, որ հետագայում սոցիալական մեդիաներում ակտիվություն բարձրացավ, տարբեր անհատներ բարձրաձայնեցին, որ շատ արագ կկարգավորեն այդ հարցը, սակայն մինչ այժմ այդ հարցին լուծում չի տրվել: Ես խոսել եմ պարոն Սիմոնյանի հետ, նա ասել է՝ եթե նույնիսկ հնարավոր չէ այդ հարցը լուծել, գոնե տնակ տրամադրեն իրեն, որ տեղադրի Ապարանի իր հողատարածքի վրա և այնտեղ բնակություն հաստատի: Ակնկալում եմ, որ այդ հարցի շուրջ քաղաքային իշխանությունն որոշակի սոցիալական հանձնառություն կունենա:

Այժմ ընթերցեմ քաղաքացիներից ստացած տեքստ՝ առանց որևէ կետ ավելացնելու. «Բարև Ձեզ, Նոր-Խարբերդի բնակիչների անունից Ձեզ խնդրում եմ բարձրացնել Նոր-Խարբերդի գազաֆիկացման հարցը: Այս հարցով զբաղվող բոլոր կազմակերպություններին տարբեր ժամանակներ դիմելուց և ոչինչ չպարզելուց հետո դիմում ենք Ձեզ: 2023 թվականին մեծ ինտենսիվությամբ մի քանի փողոցում խողովակաշար անցկացնելուց հետո, ս.թ. դեկտեմբերին այդ աշխատանքները դադարեցին, և առ այսօր որևէ տեղաշարժ չկա: Խողովակներն արդեն սկսել են ժանգոտել, իսկ հենասյուներից որոշներն արդեն ընկել են, իսկ մենք սպասում ենք ու սպասում: Ամեն տարի սպասում ենք, որ վերջապես գազ կունենանք, թաղամասը համարվում է Շենգավիթ վարչական շրջանի տարածք, որտեղ երևանյան ոչինչ չկա՝ հարկերից բացի: Խնդրում ենք ավագանու նիստերից մեկի ժամանակ բարձրացրեք նաև այդ հարցը»:

Ես հասկանում եմ, որ այս հարցը «Հայռուսգազարդ» ընկերության տիրույթում է, բայց կարծում եմ, որ բնակիչների կենցաղը, ապրուստը, պայմանները պիտի քաղաքային

իշխանության հոգածության ներքո լինեն, ուստի հուսամ, որ որոշ պաշտոնական խողովակների միջոցով ընթացք կտաք այս հարցին:

Տիգրան Ավինյան

- Պարոն Սուքիասյան, 2023 թվականին անցկացված հիմնական մագիստրալը՝ գազախողովակը, անցկացվել է Երևանի քաղաքապետարանի կողմից՝ իմ և Նոր Խարբերդցիների հանդիպումից հետո: Նոր Խարբերդում անցկացրել ենք ջրագծեր, լուսավորություն, կառուցել ենք ֆուտբոլի դաշտ և խաղահրապարակ: Հուսով եմ այս տարի կպարզաբանվի մանկապարտեզի հողի հարցը:

Պարզաբանումներ կներկայացնի քաղաքապետի խորհրդական Կամո Արեյանը:

Կամո Արեյան

- Ներթաղամասային գազամատակարարման ծրագիրն ուժի մեջ է, այն ինչը պարոն քաղաքապետը նշեց՝ դա Մասիսի վարչական շրջանի բաշխիչ կետի սնման կետից 20 կմ բերված գիծն է հասել այդ թաղամաս: Ներթաղամասայինի համար՝ ունեինք նախորոք կազմված նախագիծ: «Հայռուսգազարդ» ընկերության հետ քննարկման արդյունքում և պարոն Ավինյանի նախաձեռնությամբ է Խարբերդն ընդգրկվել գազաֆիկացման 2025-2026թթ. ծրագրում: Նրա հյուսիսային գոտու 20 կմ-ից ավել՝ Ջրվեժից Նոր-Նորք – Նորք-Մարաշ – Էրեբունի – Նուբարաշեն երկրորդ գազաբաշխիչ կայանը կառուցելու համար այս ծրագրում ներառվեց Խարբերդը՝ 50 կմ ներթաղամասային բաշխիչ ցանցով:

Ունեինք կազմված նախագիծ, որը քննարկվեց «Հայռուսգազարդ» ընկերության հետ: Այն կազմվել էր բավականին մասնագիտական թերություններով, ավելի արդյունավետ նախագիծ ունենալու համար «Հայռուսգազարդ» ընկերությունն այդ նախագիծն ամբողջությամբ վերանայեց, տրվեցին մասնագիտական գրագետ լուծումներ, անցան փորձաքննություն: Մենք նախապես այդպես էլ հայտարարել էինք, որ Խարբերդի գազաֆիկացումն ամբողջապես իրողություն կդառնա 2026 թվականին: Խարբերդը համարվում է այս մեծ ծրագրի բաղկացուցիչ մաս, ծրագրում ներառված է, փորձաքննություն անցած նոր նախագիծն առկա է, ֆինանսավորումը նույնպես առկա է: Մեկնարկին Ձեզ կտեղեկացնենք:

Տիգրան Ավինյան

- Հենաշարժողական խնդիրներ ունեցող երեխաների դպրոցին ավտոբուս տրամադրելու մասին տեղեկատվություն կներկայացնի Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի ժամանակավոր պաշտոնակատար Վիլեն Արևշատյանը:

Վիլեն Արևշատյան

- Պարոն քաղաքապետ, ավտոմեքենայի գնման հայտը ներկայացվել է քաղաքապետարանի աշխատակազմի գնումների վարչություն, ժամկետների հետ կապված պարզաբանումներ կներկայացնի քաղաքապետարանի աշխատակազմի մատակարարման և տեխնիկական սպասարկման վարչության պետ Սևակ Մելքոնյանը:

Սևակ Մելքոնյան

- Պարոն քաղաքապետ, սահմանված ժամկետում նշված մրցույթի բացումը եղել է, սակայն մասնակից չլինելու պատճառով համարվել է չկայացած: Համապատասխան փաստաթղթավորումից հետո կրկին ընթացք է տրվել, կրկին մրցույթ հայտարարելու համար:

Տիգրան Ավինյան

- Հարգելի՛ գործընկերներ, խնդրում եմ տեղեկացրեք այդ տեսակի միկրոավտոբուս կամ ավտոբուս ներմուծող ընկերություններին, որպեսզի անպայման մասնակցեն մրցույթին:

Վահագն Սիմոնյանի հետ կապված առաջարկում եմ ներկայացնել դիմում և սահմանված ընթացակարգով ուսումնասիրենք և հասկանանք, թե ինչ կարող ենք անել:

Հաջորդ հարցը՝ «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ Իոսիֆ Կուբատյան, խնդրեմ:

Իոսիֆ Կուբատյան

- Ցանկանում եմ անդրադառնալ Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի մանկապարտեզներից մեկի խնդրին, որը նկատել եմ երեխայիս մանկապարտեզ տանելիս: Մանկապարտեզը վերանորոգված է, բայց մինչև ճաղավանդակները: Մարդիկ իրենց երեխաների հետ մեքենաների արանքով են գալիս հասնում մանկապարտեզ: Մանկապարտեզի բակը բարեկարգված է, բայց ամբողջովին հող է, այնտեղ ոչ մի կանաչ հատված չկա: Երբ մանկապարտեզները վերանորոգում են, այդ ցանկապատից այն կողմ ու ցանկապատից ներս ընդհանուր համակարգային լուծում է պետք, որ ծնողները կարողանան երեխային կանգառից անվտանգ հասցնեն մանկապարտեզ և այդ մանկապարտեզի բակում էլ ինչ-որ կանաչապատ տարածք լինի:

Տիգրան Ավինյան

- Իրականում նախորդիվ մանկապարտեզների հիմնանորգման աշխատանքների ժամանակ նախագծվում էին միայն մանկապարտեզների բուն շենքը: Հետագայում այն մանկապարտեզները, որտեղ արդեն իրականացրել էինք հիմնանորգման աշխատանքներ պատվիրեցինք նաև բակային բարեկարգման նախագծեր և ենթադրում եմ, որ Ձեր որդին փաստացի հաճախում է այդ մանկապարտեզներից մեկը: Այս մասով համաձայն եմ, հաջորդ փուլով պետք է անդրադառնանք դենդրո նախագծին: Չնայած ենթադրում եմ բակային հատվածներում մենք այս տեսակ հարցերն արդեն պետք է լուծած լինեինք:

Բակային հատվածների դենդրո նախագծերի վերաբերյալ պարզաբանումներ կներկայացնի քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Անդրանիկ Թևոսյանը:

Անդրանիկ Թևոսյան

- Պարոն Ավինյան, ունենք բակեր, որտեղ սեզոնից ելնելով աշխատանքներ չենք իրականացրել և պարտավորագիր են տվել, որ աշխատանքները գարնանը պետք է կատարվեն:

Տիգրան Ավինյան

- Պարոն Բեգոյան, այն բոլոր բակերը, որոնք դենդրո նախագիծ չեն ունեցել, բայց տեղն ունեն, այդ աշխատանքները պետք է գարնանն իրականացվի:

Պարոն Թևոսյան, Դուք էլ այդ աշխատանքների ընթացքին կհետևեք:

Հարգելի՛ գործընկերներ, ինչ վերաբերում է մայթերին, պարոն Կուբատյանը լավ առաջարկ է անում: Կարծում եմ այս տարի պետք է մեր ուշադրության կենտրոնում պահենք մանկապարտեզների և դպրոցների մուտքերը և հարակից մայթերը:

Հարցի մասին պարզաբանումներ կներկայացնի նաև Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի ղեկավար Արտակ Հովակիմյանը, խնդրեմ:

Արտակ Հովակիմյան

-Պարոն Ավինյան, կարծում եմ խոսքը վերաբերում է Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանում գտնվող հ.161 մանկապարտեզին: Այս մասով ցանկանում եմ տեղեկացնել նաև, որ այդ մանկապարտեզի բակը կառուցվել է անցած տարվա ընթացքում, սակայն եղանակային պայմաններով պայմանավորված հիմա կանաչ հատված չի երևում:

Ինչ վերաբերում է դպրոցների և մանկապարտեզների հարակից մայթերի բարեկարգման աշխատանքներին, ցանկանում եմ տեղեկացնել, որ կոնկրետ այդ մանկապարտեզի հարակից տարածքում կառուցվում են բազմաբնակարան շենքեր ու այդ նախագծերի մեջ նաև ներառված է մայթերի կառուցում, այսինքն՝ ժամանակի հետ այդ աշխատանքներն ևս իրականացվելու են:

Տիգրան Ավինյան

-Պարոն Հովակիմյան, այս դեպքում կառուցապատողին խնդրեք, որ շուտ իրականացնի աշխատանքները:

Իոսիֆ Կուբատյան

-Հաջորդ հարցը՝ ցանկանում եմ իմանալ 4 նոր կառուցվող մանկապարտեզների մասին տեղեկատվություն:

Տիգրան Ավինյան

-Հարցին կպատասխանի քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Անդրանիկ Թևոսյանը:

Անդրանիկ Թևոսյան

-Երեկ կայացել է Ծարավ աղբյուրի փողոցի մանկապարտեզի շինարարության մրցույթը: Եղանակային պայմանները բարելավվելուն պես կսկսվեն հ.24 մանկապարտեզի շինարարական աշխատանքները: Կորեայի ձորի մանկապարտեզի նախագծման մրցույթը կայացել է, հաղթող կազմակերպությունը «Երևաննախագիծ» ՓԲ ընկերությունն է՝

նախագծման փուլում է: Նոր Խարբերդի մանկապարտեզի վկայականը կա, սակայն վկայականում ուղղումներ կատարելու անհրաժեշտություն կա, դրանից հետո կհայտարարվի մրցույթ:

Տիգրան Ավինյան

-Հաջորդ հարցը՝ «Մայր Հայաստան» խմբակցության անդամ Արմեն Քոչարյան, խնդրեմ:

Արմեն Քոչարյան

-Մոլդովական փողոցի հ.29/6 հասցեի և Բագրևանդ փողոցի խաչմերուկին հարակից գտնվող հանրակացարանի բնակիչները մայթի հետ կապված խնդիր ունեն: Բնակիչները հետիոտնային անցումն անցնում են և հայտնվում ցեխակույտի մեջ: Նշված հատվածում մայթ գոյություն չունի: Իմ ֆեյսբուքյան էջում հրապարակել եմ, որ երեխաները ծնողների հետ անցնում են երթևեկելի մասով:

Երկրորդ հարցը.

Նոր Նորք վարչական շրջանի 4-րդ զանգվածի Ա. Բակունցի փողոցի հ. 11/11 շենքի բնակիչները կանգնած են ջուր չունենալու խնդրի առաջ: Նրանք դիմել են տարբեր ատյաններ, սակայն հարցը մնում է չլուծված:

Բնակիչները դիմել են «Մայր Հայաստան» խմբակցություն և նրանց հետաքրքիր է իրենց հարցն ինչպե՞ս է լուծվելու:

2022 թվականի մարտ ամսին տրվել է ավարտական վկայական, իսկ ջուրը միացված է եղել 2021 թվականի սեպտեմբեր ամսին՝ «Դրագոն Հաուզ» կառուցապատողի կողմից:

Կա մեկ դիտահոր, որտեղ 24 բնակարանի համար դրված է 1 ջրաչափ, այդտեղից օգտվում է նաև «88» սուպերմարկետը: Բնակիչներն ամեն ամիս վիճում են, թե յուրաքանչյուրն որքան գումար պետք է վիճարի: Բնակիչները ներկայումս գումարը վճարում են, որպեսզի ջրանջատում չլինի, բայց գոյություն ունեն պարտքեր: Բնակիչներն ակնկալում են քաղաքային իշխանություններից, որ Ձեր լծակներով հանձնարարեք հարցը լուծել:

Տիգրան Ավինյան

-Հարցին կպատասխանի քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողի վերահսկողության վարչության պետի տեղակալ Ռուբեն Խոջայանը:

Ռուբեն Խոջայան

- Պարոն քաղաքապետ, ըստ ներկայացված տեղեկատվության, պարզ է դառնում, որ տեղադրված է 1 ջրաչափ, տրվել է ավարտական ակտ, բայց շահագործման թույլտվություն չի տրամադրվել:

Տիգրան Ավինյան

-Առաջարկում եմ հարցը տեղում ուսումնասիրել, հանդիպեք բնակիչների հետ և հասկացեք լուծումները: Այսինքն խնդիր կա, որ շահագործման թույլտվությունը չի տրվում:

Մոլդովական փողոցի հ.29/6 հասցեի մայթի վերաբերյալ Նոր Նորք վարչական շրջանի ղեկավար պարոն Սևոյանին առաջարկում եմ հարցն ուսումնասիրել և քաղաքապետարանի գործակարգավարական խորհրդակցության ժամանակ զեկուցել:

Հաջորդ հարցը՝ «Ազգային առաջընթաց» խմբակցության ղեկավար Արամ Թորոսյան, խնդրեմ:

Արամ Թորոսյան

- Առաջին հարցը վերաբերում է Ներքին Շենգավիթի 2-րդ փողոցի 2-րդ փակուղու՝ «Արմեն Կարպետ» նախկին ձեռնարկության հարակից տարածքին, որտեղ ջուր է կուտակվում՝ մեծ խնդիր ստեղծելով սեփական տների համար:

Խնդրում եմ ուսումնասիրել և այս հարցին լուծում տալ, որ մարդիկ այդ խնդրից ազատվեն:

Երկրորդ հարցը վերաբերում է Ավան վարչական շրջանի հ.7 մանկապարտեզին, որը չի գործում որպես մանկապարտեզ: Ինչպես ես հասկանում եմ կան նմանատիպ դեպքեր բոլոր վարչական շրջաններում, որ մանկապարտեզների նախկին շենքերը, ըստ ամենայնի, որոշում է կայացվել, որ չպետք է վերանորոգվեն, այլ նոր մանկապարտեզներ պետք է կառուցվեն:

Այդ շենքում կան ազատ տարածքներ, չօգտագործվող, պատուհանները կոտրված: Եթե մարդիկ ունեն առաջարկ այդ տարածքներում որևէ սոցիալական կամ այլ գործունեություն իրականացնելու, ընթացակարգն ինչպե՞ս է, կա՞ այդպիսի ընթացակարգ և ու՞մ պետք է դիմեն:

Տիգրան Ավինյան

-Առաջին հարցի վերաբերյալ, հանձնարարում եմ Շենգավիթ վարչական շրջանի ղեկավար պարոն Գաբրիելյանին, ուսումնասիրել հարցը և գործակարգավարական խորհրդակցության ժամանակ ներկայացնել տեղեկատվություն:

Երկրորդ հարցին կպատասխանի Ավան վարչական շրջանի ղեկավար Վահե Հակոբյանը:

Վահե Հակոբյան

- Խոսքը վերաբերում է չգործող մանկապարտեզին, որտեղ կան ազատ տարածքներ, նաև կան զբաղեցված տարածքներ: Օրինակ՝ վարձակալության հիմունքներով տարածքներ են զբաղեցնում «Գազպրոմ» ընկերության ստորաբաժանումը, երկու համատիրություն, նաև հասարակական կազմակերպություն: Այդ շենքից տարածքներ վարձակալելու գործընթացը սկսվում է քաղաքապետարանից: Վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերը նման լիազորությամբ օժտված չեն: Վարչական շրջանների

ղեկավարների աշխատակազմ ներկայացվում է միայն կարծիք ստանալու համար: Երբ դիմեն, մենք կուսումնասիրենք և ըստ ծավալվող գործունեության մեր կարծիքը կհայտնենք:

Տիգրան Ավինյան

-Հաջորդ հարցը՝ «Մայր Հայաստան» խմբակցության անդամ Սուսաննա Մելիքյան, խնդրեմ:

Սուսաննա Մելիքյան

-Առաջին հարցը վերաբերում է քաղաքացիների ահազանգին: Սիլիկյան թաղամասի բուժարանը փակել են և շենքը դրվել է վաճառքի: Բնակիչներն անհանգստանում են, թե ի՞նչ է լինելու այդ շենքի ճակատագիրը:

Երկրորդ հարցը վերաբերում է ապաստարաններին: Հիմնականում խոսքը վերաբերում է դպրոցներում ու մանկապարտեզներում ապաստարաններ, նկուղներ չլինելուն: Նույնիսկ հիմնանորոգված մանկապարտեզներում ոչ միայն չկան ապաստարաններ, այլև եղած նկուղները փակվել են:

Ներկա պահին ուզում եմ այս հարցը բազմաբնակարան շենքերի հետ կապված բարձրաձայնել: Վերջին տարիներին ես անընդհատ զարմանում եմ, թե ինչու՞ բյուջեի քաղաքացիական պաշտպանության հոդվածներում չի նախատեսվում կոնկրետ նկուղները վերականգնելու, բարեկարգելու որպես ապաստարան դարձնելու միջոցներ: Այս պահին իմ ձեռքի տակ է Երևանի քաղաքապետի 2025թ. հունվարի 9-ի հ.32-Ա որոշումը, որով հաստատվել է քաղաքացիական պաշտպանության միջոցառումների ծրագիրը: Որոշման 7-րդ և 8-րդ կետերում է միայն խոսք է գնում բազմաբնակարան շենքերի նկուղների մասին՝ հիմնականում ուսումնասիրությունների մակարդակով և հանձնարարվում է, որպեսզի ամեն ամիս՝ մինչև 10-ը պատասխանատուները ներկայացնեն հաշվետվություններ կամ ուսումնասիրություններ, թե ինչ վիճակում են:

Ես ուզում եմ իմանալ կոնկրետ այս մեկ տարվա ընթացքում ինչքա՞ն նկուղներ կան շատ վատթար վիճակում: Այսինքն այդ ուսումնասիրության նպատակը ո՞րն է: Դուք պատրաստվու՞մ եք առաջիկայում բնակիչների կողմից օգտագործվող նկուղները նույնպես վերականգնել, բարեկարգել, ապաստարան դարձնել, թե միայն անմխիթար, վատ վիճակում գտնվող նկուղները: Ի վերջո դրանք կարո՞ղ են ծառայել որպես ապաստարան, նպատակ ունե՞ք, որ առաջիկայում բյուջեի հոդվածներում տեսնենք այդ հարցը:

Տիգրան Ավինյան

- Տիկին Մելիքյան, իրականում մենք մեկ անգամ՝ 2022թ. բյուջեով հատկացրել ենք գումարներ և վարչական շրջաններում իրականացրել ենք տարբեր ապասատարանային ստանդարտներին համապատասխան նկուղների մաքրման աշխատանքներ: Շատ դեպքերում այդ ապաստարանային հատվածների մաքրման աշխատանքները 2022թ. կազմակերպել ենք: Այժմ մենք իրականացնում ենք կրկնակի մոնիտորինգ, որպեսզի

տեսնենք ինչ վիճակում են 2022թ. իրականացված աշխատանքները և 2022թ. որոշակի մեխանիզմներ էինք մշակել այն սեփականատերերի հետ, ովքեր սեփականաշնորհել էին փաստացի ապաստարանները և այնտեղ որևէ գործունեություն էին ծավալում: Այս մոնիթորինգի արդյունքում կտեսնենք, թե այդ տարածքներում ինչ է տեղի ունեցել:

Ինչ վերաբերում է մանկապարտեզներին, միայն այս տարի հ.հ.17, 39, 46, 64, 72, 93, 133, 33, 56, 101, 108, 118, 129 մանկապարտեզներում սկսելու ենք հիմնանորոգման աշխատանքները և բոլոր վայրերում, որտեղ ստանդարտով նախատեսված են ապաստարաններ՝ լինելու են: Այս տարի մենք այս 13 մանկապարտեզում սկսելու ենք աշխատանքները և Ձեր մատնանշած խնդիրները մասնակի լուծվելու են:

Իսկ Ձեր հարցը՝ մասնավորապես մոնիտորինգի հետ կապված, ավելի շատ վերաբերում է 2022թ. արված աշխատանքների ստուգմանը, որպեսզի տեսնենք ինչ վիճակում են հիմա այդ ապաստարանները:

Սիլիկյան թաղամասի բուժարանի վերաբերյալ հարցին կպատասխանի Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի առողջապահության վարչության պետ Դավիթ Կարապետյանը:

Դավիթ Կարապետյան

-Սիլիկյան թաղամասի բուժարանի վիճակը բարվոք չէր և բազմաթիվ քաղաքացիների բողոքի պատճառով, քանի որ մեր տարածքը չէր, հետ ենք վերցրել մինչև տարածք գտնենք և կարողանանք քաղաքացիներին սպասարկել:

Տիգրան Ավինյան

-Պարոն Կարապետյան, եթե հնարավոր է կարճ ժամկետով տեղային լուծում գտեք, եթե ոչ, ապա ուսումնասիրեք, թե Սիլիկյան թաղամասն ուրիշ ի՞նչ խնդիրներ ունի, ի՞նչ ենթակառուցվածքի պակաս կա և հիմնարար լուծում գտնենք:

Ավարտվեց հարց ու պատասխանը:

Ավագանու հարգելի՛ անդամներ, հարգելի՛ գործընկերներ, Երևանի ավագանու 6-րդ նստաշրջանի 1-ին նիստը հայտարարում եմ փակված:

Շնորհակալություն, ցտեսություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

Կազմող՝
Կազմակերպական վարչություն